

ԲԱՐԵԳՈՐԾ

БАРЕГОРЦ

**ՇՈՒԾՈՒԻՄ ԱՍՏՈՒՆՔԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՒՆԸ՝
ՆԿԻՐՎԱԾ ՀՈԿՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 150-ԱՄՅԱԿԻՆ
Հովանավորությամբ ԱՄՆ-ում գործող «ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ»**



Ծննդի օրը՝ 1936 թվականի օգոստոսի 1-ին, Կոմիտասի անվան
 մանկավարժական ինստիտուտի Կոմիտասի անվան մանկավարժական
 ինստիտուտի Կոմիտասի անվան մանկավարժական ինստիտուտի
 Կոմիտասի անվան մանկավարժական ինստիտուտի Կոմիտասի անվան



Գնահատող հանձնախումբը աշխատանքի պահին



Մի խումբ մասնակիցներ գնահատող հանձնախմբի հետ

Գնահատող հանձնախմբի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը և բարերար Ա. Բաղդասարյանը հայտարարեցին երկու տարիքային խմբերում առաջին երեք տեղերը նվաճած հաղթողներին, նրանց հանձնեցին մրցանակներ և նվերներ: Բոլոր մասնակիցները պարգևատրվեցին պատվոգրերով և հուշանվերներով:

Ահա երկու տարիքային խմբերում մրցանակակիր հաղթողների ցուցակը.

- Լիլի Զայթյան, 10 տարեկան, ԱՄՆ, Լոս Անջելես, 1-ին խմբում 1-ին մրցանակ
- Մարիամ Վարդանյան, 15 տարեկան, Արցախ, Շուշի, 2-րդ խմբում 1-ին մրցանակ
- Արփինե Բակունց, 16 տարեկան, ՌԴ, ք. Կրասնադարից, 2-րդ խմբում 2-րդ մրցանակ
- Պարույր Սթանբուլյան, 17 տարեկան, Լիբանան, Այնճար, 2-րդ խմբում 2-րդ մրցանակ
- Ռազմիկ Կարապետյան, 12 տարեկան, ք. Էջմիածնից, 2-րդ խմբում 2-րդ մրցանակ
- Չոյա Ղարսյան, 10 տ., Ջավախքից. 1-ին խմբում 3-րդ մրցանակ
- Նոյ Նազարյան, 16 տ., Իրան, ք. Թեհրանից, 2-րդ խմբում 3-րդ մրցանակ
- Անուշ Մարտիրոսյան, 16 տ., Արցախ, Մարտունու շրջանից, 2-րդ խմբում 3-րդ մրցանակ:

Հաղթողների համերգն սկսվեց նախորդ տարիների մրցանակակիր Միլենա Գրիգորյանի (15 տ., Երևանի Դ. Դեմիրճյանի անվան դպրոց) ասմունքով. առաջին անգամ Շուշիի բեմում հնչեց Հովի. Շիրազի՝ 1959 թ.

գրած, բայց հասկանալի պատճառներով խորհրդային օրերում չտպագրված ՏՂարաբաղի ողբը՝ քերթվածը, որն ընդունվեց բուն ծափահարություններով:

Նույնպիսի ջերմությամբ ընդունվեց Լիբանանից ժամանած Նշանավոր Նկարչուհի և դերասանուհի Սիրվարդ Ֆազլյանի հրաշալի ասմունքը արևմտահայ քնարերգության ընտիր նմուշներից:

Ապա ներկաներն ունկնդրեցին 8-րդ փառատոնի մրցանակակիրներին, որից հետո արցախյան խաղիկներից բաղկացած համերգով մասնակիցներին ողջունեց Շուշիի Աղջիկների խումբը: Իր հրաշալի կատարումով հանդես եկավ ԱԶ վաստակավոր արտիստ Տիգրան Սկրտչյանը: Ամփոփիչ հանդիսավոր համերգը եզրափակվեց ՀՀ և ԱԶ հիմներգերով:

Արցախյան համահայկական ասմունքի փառատոնն ՏԱՎան պլազա՝ հյուրանոցում ավարտվեց ուշ գիշերին ավանդական խարույկի շուրջ մասնակիցների երգ ու պարով, հետաքրիր ու զվարճալի խաղերով:



Ասմունքողները ոգևորությամբ ծառ են տնկում



Շնորհավորում են պուրակի հիմնումը

Մեկնումի օրը հաճելի անակնկալ էր պատրաստել Գուրգեն Մելիքյանը: Նրա նախաձեռնությամբ Բերձորի մերձակայքում մյուս այգիների ու պուրակների հարևանությամբ, հիմնվեց ՏՀամահայկական ասմունքի փառատոնի արցախյան պուրակը՝ որտեղ յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ տնկեց իր ծառը:

Արցախից բոլորը վերադարձան անջնջելի, անմռաց տպավորություններով:



Նկարում՝ ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկության» կողմից բարեգործ Ալեք Բաղդասարյանը (ձախից երկրորդը) բացում է « Ասմունքի համահայկական փառատոնի արցախյան պուրակի» հիմնադրման օրը բացում է հուշատախտակը



Փառատոնի մասնակիցները եզրափակիչ համերգից հետո՝ Շուշիի մշակույթի պալատի բեմում

ՍԱՐՈՅԱՆԱԿԱՆ ԴԵՄՔՈՎ ԲԱՐԻ ՀՄԱՆ

Լաչինի միջանցքի երկայնքով վեր խոյացող, քամու ծփանքից տարուբերվող մատողաշ ծառերի տերևները սթևեթում ու արևին էին տալիս իրենց մատողաշ մեջքը: Չէ՛, քամին ինչքան էլ ուժեղ լիներ, հաստատ նրանց մեջքն ու պարանոցը չէր ջարդի,

չորքոտանիների դուռնչը նրանց չէր հասնի, քանի որ յուրաքանչյուրծառ ցանցով է շուրջջլորած:

Ծառերը մեզ պապակ կոկորդով չէին նայում, դա հաստատ էր, ինչամող ձեռք էր դիպչում նրանց, հոգատար ու սրտացավ հոգի:



Հայրենի հողում տնկված ծառը հրճվանք է պարգևում
Ծառերն այստեղ հպարտությամբ են վեր խոյանում
իև՛չպես մարդիկ:

Գուրգեն Մելիքյան...

Սարոյանական դեմքով այս բարի հսկան ծնվել է Իրանի Աբադան քաղաքում, սիրել է բարձունքներ և զբաղվել իր սիրած մարզաձևով՝ լեռնագնացությամբ:

Բարձրագույն կրթություն ստացել է Հայաստանի մայր բուհում, սովորել բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների ու գրականության բաժնում: Այնուհետև դարձել է արևելագիտության բաժանմունքի դեկանը: Արդեն պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը հեղինակ է մի շարք գրքերի ու երկու դասագրքի:

Պատերազմի դժնի ու մահգույժ օրերին նա հասնում է ռազմի դաշտ, մասնակցում Մաճկալաշենի կամավորական ջոկատի կազմավորմանը, զինելու և հանդերձավորելու աշխատանքներին:

Արցախյան ազատամարտի ընթացքում եղել է Ազատագրական բանակի հրամանատարի արտաքին կապերը համակարգող տեղակալ:

Բարոություն սփռող բարեգործ հայի անունով 1996թ. հիմնվել է ՏԳուրգեն Մելիքյանի՝ Զաշաթադի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը, որն արդեն քսան տարուց ավել է՝ օգնում է Արցախի բազմազավակ ընտանիքներին:

Մինչև օրս մեծ եռանդով ու սիրով կազմակերպում ու իրականացնում է բազմաթիվ ու բազմաբնույթ բարեգործական միջոցառումներ: Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված Ասմունքի համահայկական մանկապատանեկան 8-րդ մրցույթ՝ փառատոնի ավարտին Գուրգեն Մելիքյանը մի շատ հետաքրքիր ավանդույթի հիմք դրեց. հրաժեշտից առաջ աշխարհի տարբեր երկրներից

եկած հայ երեխաներն իրենց ձեռքով ծառ տնկեցին Արցախի հողում՝ այն էլ ՏԱՍՄՈՆՔԻ համահայկական փառատոնի արցախյան պուրակում:

Սա բահի հմուտ գործածության կամ շիվը հողին պահ տալու սովորական արարողություն չէ, սա հուզմունք է, արցունք, հպարտություն:

Ծառը հողին պահ տալուց առաջ, բարձրացվող ալ գինու գավաթների հետ երկնի Բարձրալիկն է հասնում Գ. Մելիքյանի հնչեղ ձայնը:

Ծառերի օրհնությունը սկսում է օտարագիր հայ բանաստեղծ Լևոն-Չավեն Սյուրեմյանի ՏԱՍԱԳՎԱԾՔ՝ ծառ տնկելու առթիվ՝ բանաստեղծությամբ.

–Տէ՛ր, օրհնէ՛ ծառն այս մատղաշ: Ես կըտընկեմ գայն ահա
Փխրուն ու սև հողին մեջ, ուր պապերս կըպառնկին:
Ես՝ անոնց թոռը հսկա՝ այս հողին տերն եմ կրկին
Ու արևին տակ կ'աճիմ անունն իրենց շուրհի վրա:

Երկաթագիր պատմությունն այս մտերիմ հողերուն
Աչքիս արցունք կըբերե... Փառք ու մեռել շատ ունի
Երկիրն իմ հին, ալևոր, որուն ես թոռն եմ վայրի՝
Խոկումներով բեղմնավոր, երազներով օրորուն...
Մեռելներուս իբրև խաչ՝ ես այս ծառը տնկեցի...

Հիշում եմ, 2018 թ. ամառն էր, Գուրգեն Մելիքյանի հետ Նորավանք հասանք: Նա բարի ու ժպտացող աչքերով մեզ իր մոտ կանչեց, ցույց տվեց եկեղեցի տանող արահետի վրա՝ պարսպի դարպասի ձախ կողմում, փաթեթաձև ճյուղերն արևին տված ունաքի մի ծառ: Միանգամից գլխի ընկանք, իր տնկած ծառերից մեկն էր:

–Տեսե՛ք, ունաքի ծառն արդեն պտուղ է տվել: Սա այն եզակի ծառերից է, որ պտղի հետ միաժամանակ նաև ծաղկում է:

Նա հետաքրքրությամբ մեզ պատմում էր ծառը տնկելու օրվա մասին անմոռաց հուշեր, իսկ ես նայում ու փորձում էի զգալ նրա աչքերի խորության անհունների մեջ թաքնված ծով բարության ու սիրո առատության չափը: Անսահման էր, անչափելի՝ Աստված վկա:

Հաճույքով լսեցինք, պարոն Մելիքյանի հետ լուսանկարվեցինք՝ միմյանց հերթ չտալով:

Բոլորս այս ու այն կողմ գնացինք:

Գուրգեն Մելիքյանը մնաց իր՝ արդեն հասակ առած ծառի կողքին: Ձեռքի ջրի փոքրիկ շշից ծառին էլ բաժին հանեց:

Ծառին կյանք տվեց, ծառն իրեն՝ օրհնանք:

— Օրհնություն քեզ, Մե՛ծ հայ...

ՆԱԻԲԱ ԱՐԱՅԱՄՅԱՆ

Երևանի Մ. Նալբանդյանի անվան դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԾԵԿՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՆԴԵՊ ԾՇՄԱՐԻՑ ՍԻՐՈՒՑ

Մփյուռքի մեր ոչ բոլոր հայրենակիցները են ապրում ճոխության ու լիության մեջ: Ոչ ոք դյուրությամբ գումար չի աշխատում: Շատերն են դժվար վաստակի մարդիկ, բայց հենց նրանք՝ սահմանափակ հնարավորությունների տեր այդ հայրենասերներն ավելի են մտահոգված մեր, մեր



երկրի ու ժողովրդի ճակատագրով:

Մեր հիմնադրամի ուխտյալ զինվոր, դոկտոր Վաղարշակ Փիլոսյանը զանգահարեց, որ բուպեներ անց

այցի է գալու ինձ: Տան ներքևում՝ փողոցում, հանդիպեցի նրան, քանզի վաղուց պայմանավորված՝ այցելության էի գնում հիմնադրամի լավագույն բարեկամ, վաղեմի ընկերոջս՝ Սուրեն Բադալյանին:

Դոկտորն արագորեն մեկնեց ինձ մի ծրար՝ մեջը մեկ դոլարանոցների մի տրցակ, և ասաց.

— Սա տիկին Մայել Ավանեսյանի նվերն է հիմնադրամին, 100 ԱՄՆ դոլար:

Ընկերոջս տուն հասնելով՝ նրա դստրիկ Կարինեին խտորեցի հաշվել ծրարի պարունակությունը: Պարզվեց՝ տիկին Մայելը ոչ թե 100, այլ 111 դոլար է նվիրել մեր հիմնադրամին: Զանգահարեցի նրան և պատմեցի իրողությունը:

Նա խնդրեց գումարն օգտագործել հիմնադրամի ցանկացած ծրագրում, բայց ես առաջարկեցի ծառերի ծրագիրը՝ ծառեր տնկել իր թոռների՝ Սևանա, Արթին, Շանթ և Թենի Ավանեսյանների արևշատության համար:

Ո՞վ գիտե, իր առօրյա ծախսերից որի՞ց է մեկ դոլար պակասեցրել, հետևողականորեն հավաքել և հուսալի ճանապարհով ուղարկել Հայաստան...

Կարևորը մարդու կամեցողությունն է, բարիք գործելու, հայրենակիցներին ինչով կարող է օգտակար լինելու պատրաստակամությունը:

Մայել Ավանեսյանի օրինակելի արարքը գովասանքի է արժանի, իսկ ինքը՝ հավիտենական օրինանքի:

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Խմբագրությունն նպատակալարմար գտաւ վերատպել Երունդ Տէր-Խաչատուրեանի «Նամակներ երկրից» շարքից 31-րդը, որը վերաբերում է ամերիկահայ նշանավոր բժիշկ և բարերար Քերոլան Նաջարեանի «Կանչ հայրենի տնից» գրքին: Պահպանում ենք բնագրի ուղղագրությունը:

ՆԱՄԱԿ 31

Միրելի՛ ընկեր,

Մեր վերջին մեծ ողբերգությունից՝ 1988 թուականի դեկտեմբերի 7-ի ահաուր երկրաշարժից յետոյ մեր կեանքի մէջ հասկացողիւններ մտան, որոնք մինչ այդ մեզ ծանօթ էին գրքերից եւ անցեալի պատմութիւններից:

Իմ խօսքը առաջին հերթին բարեգործութեան մասին է, այլ խօսքով՝ մարդկանց հանդէպ, մանաւանդ աղէտի ենթարկուած, օգնութեան կարօտ մարդկանց հանդէպ քրիստոնէական գթասրտութեան, կարեկցանքի եւ սրտացաւ վերաբերմունքի մասին:

Մենք գրքերից,- նոր ժամանակների գրքերից,- գիտե՞ինք թագաւորական Ռուսաստանում ապրած բարեգործ մեծահարուստ մարդկանց՝ Շտիգլիցի, Մորոզովի, Ռեաբուշիցկի, ուրիշների բարեգործութիւնների մասին: Նրանք մեզ թուում էին հէքիաթային, ֆանտաստիկ, լեզենդական անձնատրութիւններ, մինչդեռ իրականում, պարզում է, նրանք եղել են պարզ, սովորական մարդիկ, մարդկային մարդիկ: Յետոյ արդեն մեր ժամանակակից Բիլ Գէյթսը կար:

Հայաստանում մենք տեսանք իսկական բարեգործութիւն, բայց իսկական բարեգործութեան հետ ուրիշ շատ բան տեսանք: Տեսանք՝ թէ՛ Սփիւքի, թէ՛ Հայաստանի որոշ այսպէս կոչուած բարեգործներ ի՞նչ արտառոց արտոնութիւններ ունեն....

Մեկը իր անունով պողոտաներ է ստանում եւ արձաններ, միւսը կնոջ անունով քաղաքի կենտրոնում եկեղեցի է կառուցում, երրորդը... Բայց պարոնմայր, դա ի՞նչ բարեգործութիւն է, դա պարզապէս անմաքուր ու անբարոյական առեւտուր է:

Նման տխուր մտքեր արթնացան մէջս, երբ բոլորովին պատահաբար ձեռքս ընկաւ վաղուց՝ 2000 թուականին տպագրուած մի գիրք՝ «Կանչ հայրենի տնից» խորագրով: Գիրքը գրուել է անգլերէն: Հայերէն հրաշալի թարգմանել է Համբարձում Քենդերեանը, մեր սիրելի Համբիկը: Դու նրան յիշում ես, գրականութեան ինստիտուտում էր աշխատում:

Գիտե՞ս, հիմա Հայաստանում տարեկան այնքան շատ գիրք է տպագրում, չեմ հասցնում ամէն բանի հետևել: Գրամուկները հեղեղել են գրական շուկան իրենց շքեղ տպագրուած անպէտքութիւններով:

Գիրքը գրաւեց ինձ, եւ հաւատա, որ կարդացի, ինչպէս ասում են, մի շնչով:

Նախ՝ գիրքը մեր ապրած, ի՞նչ ապրած ժամանակների մասին էր՝ 1988 – 1998 թուականների մասին, եւ յետոյ, գրքի ամեն մի էջից անկեծութիւն, ազնութիւն ու նուիրածութիւն էր յորդում: Եւ կար նաեւ երրորդ պատճառը՝ գրքի հեղինակը: Հեղինակը ամերակցի բժշկուհի Քերոլան Նաջարեանն էր, որին ծանօթացել էի արեւելագիտութեան պրոֆեսոր Գուրգէն Մելիքեանի աշխատասենեակում: Եւ յետոյ նոյն աշխատասենեակում հանդիպել էի էլի երկու-երեք անգամ. Մի անգամ էլ նաեւ իր ամուսնու՝ Զորջ Նաջարեանի հետ, գրուցել իրենց հետ:

Գրքի խորագիրն արդեն շատ խօսում է՝ «Կանչ հայրենի տնից»: Բոստոնի համալսարանի բժշկական բաժանմունքի շրջանաւարտ, ներքին հիւանդութիւնների մասնագէտ, ապահով ու հանգիստ կեանքով ապրող

Քերոլան Նաջարեանին մի օր ձայն է հասնում. Նա կանչ է լսում աղետեալ Հայաստանից՝ իր հայրենի տնից: Արաբկիրցի ծնողների զաւակ Քերոլան Նաջարեանը իրեն լիովին զգում է Հայաստանի զաւակ եւ շտապում է հայրենի տան կանչին: Այդ կանչը նրան վերադարձնում է իր արմատներին. իր պատմութիւնը նա սկսում է՝ ոգեկոչելով իր նախնիներին եւ նրանց հետ անցնում է նրանց կեանքի ճանապարհով: Այդպէս հեղինակը հոգեպէս պատրաստում է Հայաստան մտնելուն:

Քերոլան եւ Զորջ Նաջարեանների կատարած բարեգործութիւնները, բժշկուհի Քերոլան Նաջարեանի գործունեութիւնը Հայաստանում եւ Արցախում մեր ժողովուրդը լաւ գիտի եւ երախտապարտ է նրանց: Այդ մասին տասնեակ յօդուածներ ու ակնարկներ են գրուել, բայց այս գիրքը այդ մասին չէ եւ դա գրքի կարեւոր արժանիքներից մէկն է:

Ինքնակենսագրական բնոյթի գրքերում սովորաբար կենտրոնական դէմքը ինքը հեղինակն է: Քերոլան Նաջարեանի գրքի հիմնական հերոսը իր սէրն է Հայաստանի ու Արցախի, աղէտի ենթարկուած մարդկանց, Հայաստանի հողի ու բնութեան եւ ամբողջ ժողովրդի հանդէպ: Հեղինակը ապրում է երկրի կեանքի ամեն մի իրադարձությամբ, արձագանքում է կատարուած դէպքերին եւ իրողութիւններին, ինչպէս կ'արձագանքեր Հայաստանի հին ու հիմնաւոր բնակիչը, Աշոցքի գիւղերից մէկի, Գիւմրիի կամ թէ Արցախի հեռաւոր մի գիւղի բնակիչը: Նրա հայեացքը «դրսի» մարդու հայեացք չէ. զարմանալիօրէն նա ամեն բան տեսնում է ներսից: Նա ուրախանում է բոլորի հետ, բոլորի չափ, ասես մանկական ինտենսիւ բուժման կենտրոնի վերանորոգումը ոչ թէ ինքն է արել, այլ ուրիշներն են արել իր համար, ծննդատան ջեռուցման համակարգը ոչ թէ իր հիմնադրած ու ղեկավարած «Նիւ Եորքի Հայկական Առողջապահական Ընկերակցութիւն» բարեգործական կազմակերպութեան նուէրն է, այլ ինքն է ստացել այդ նուէրը: Գրքի գրեթէ բոլոր էջերում իր հանդիպած մարդիկ են՝ բժիշկներ, հանրային գործիչներ, տարբեր զբաղմունքի ու մասնագիտութիւնների տեր պարզ մարդիկ: Բոլորի մասին Քերոլան Նաջարեանը խօսում է սիրով, հիացումով, գոռովանքով... Այսպէս խօսում եւ գրում են հարազատ, մերձաւոր մարդկանց մասին: Եւ սա էլ գրքի անժխտելի արժանիքներից մէկն է:

Եւ երբեմն էլ գրքի հեղինակը մոռանում է իրեն եւ խօսում է Հայաստանում հանդիպած ու ճանաչած մարդկանց մասին, խօսում է առանձնակի հիացումով՝

Գրքի ծառայուն հատուածներից մէկը կոչում է «Մարդ, որ պատկանում է ողջ մարդկային ցեղին»: Խորագիրը շատ պարտաւորեցնող է եւ շատ վճռական: Բայց այն իր խորքում ճշմարտութիւն է պարունակում: Գրքում այդ հատուածը նուիրուած է Հայաստանում բարեգործական գործունեության մէջ անմրցելի երախտաւորին՝ արուելագիտութեան պրոֆեսոր Գուրգէն Մելիքեանին, որը, չգիտես, որտե՞ղ է ապրում՝ Արցախում, որտեղից երբեմն գալիս է Հայաստան, թե՞ Երեւան – Արցախ ճանապարհին: Գուրգէնը իր նկարագրով իսկական մտատրական մարդ է ու իսկական քաղաքացի. Նա չի կարող անտարբեր լինել ոչ մի բանի հանդէպ: Ամեն օր նրա աշխատասենեակը գրոհում են տասնեակ մարդիկ ամեն տեսակի, երբեմն նոյնիսկ անհաստատալի խնդրանքներով: Մարդիկ կարծում են, թէ նա ամեն խնդիր կարող է լուծել, կարող է բոլոր կարօտեալներին օգնութեան հասնել: Եւ նա տառաջօրէն կաշտից դուրս է գալիս իր խնդրատուներին օգտակար լինելու համար: Իսկ իր բարեգործական գործունեութիւնը արժանի է առանձին մեծ շարադրանքի, առանձին

Քերտուան Նաչարեանը Գորգէն Մելիքեանի բարեգործութիւնների մասին խօսում է այնպիսի հիացումով, որ ինքը այն մեծ բարեգործուհին չէ կարծես, որ երջանկութիւն եւ ուրախութիւն է պարզկում հարիւրաւոր ընտանիքների, հազարաւոր մարդկանց:

Այսպիսի գիրքը պետք է գրեին ուրիշները, որ Քերտ-
լան Նաջարեանի կերպարը դուրս գար համեստութեան
ստուերից եւ երեսար մարդկային եւ բարոյական նկա-
րագրի, իր բարեգործական գործունէութեան ողջ
պայծառութեամբ:

Ճիշտ կրլիցնի գիրքը ուղարկեմք քեզ:

Մամ ընթերցող ընկերո՛ւ՝
Երուանդ Տէր-Խաչատուրեան

Դիմումները ընդունվում են Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի՝ պրոֆ Գուրգեն Մելիքյանի աշխատասենյակում բոլոր աշխատանքային օրերին մինչև 2019 թ. սեպտեմբերի 20-ը ներառյալ:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

77ÈÈ²ìàð ÊØ´²7Æð` ê²ØìºÈ Øàôð², Ú²Ü
 µ³Ý. ·Çì. ¹áííñ, ãñáy»ëáñ

ÈØ²¶ð²¹⁴Ø`
 ²²¶Ú² ²., μ. . ¹., ãñáy`éáñ
 ØÈÆØÚ² ¶., μ. . Ã., ãñáy`éáñ
 êü²ðÚ² ²È., å. . Ã., ãñáy`éáñ
 ĊñîîùÀ " Ó³µñññµñ` ê. Øðññ³¹Ú³ÝĊ:

ĩăũ³ĩ³ĩÁ` 99: Â»ñĀĀ μ³Ā³ĩÁăŮ Æ ³ĩ³×ñ:
ÊŮμ³.ñăăŬũ³ĩ Ĥ³ăă»Ÿ ƞ³³³ĩ 375025, ²ăĩŮ³ĩ 52 ²,
 Ĥ³Ů μ³ĩ³ũħñăăŬũ³ĩ ý³ĩăăÊĩ»ĩÇ ŮăÊĩ³Ĥ»Ÿù, 215
 ă»ŸŮăĩ: **Đ»é.^a 060 710 629,**
055 -52- 29-36. 55 – 25 – 37, 52- 29- 36: